ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

13 հունիսի 2022 թվական

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՉԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2022 թվականի հունիսի 13-ին ժամը 15:30-ին նշանակված ավագանու N 9 հերթական նիստին ներկայացել էին ավագանու թվով 21 անդամներից 10-ը. Հարությունյան Վահրամ, Շահինյան Շահեն, Մնացականյան Գայանե, Մարտիրոսյան Նարեկ, Մակարյան Մարյամ, Մելքոնյան Հակոբ, Մկրտչյան Սարիբեկ, Պողոսյան Արմինե, Պետրոսյան Կարեն, Մարկոսյան Սեյրան:

Համայնքի ղեկավարի բացակայության պատճառով նիստը վարում էր Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահրամ Հարությունյանը:

Ավագանու հերթական նիստի օրակարգային հարցերն էին.

1. Արաքս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 3-ի N 38-Ա և ապրիլի 25-ի N 51-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին,
3. Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդի անցկացման, հողամասերի օտարման կամ վարձակալությամբ /կառուցապատման իրավունքով/ մրցույթային կարգով տրամադրելու կանոնակարգը հաստատելու մասին,
4. Արաքս համայնքի լուսագյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գազատարը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու մասին,
5. Արաքս համայնքի աղբահանության իրականացման կարգը, 2022 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն՝ ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

Օրենքի ուժով նիստը համարվում է չկայացած՝ իրավազոր չլինելու հիմքով:

Ավագանու անդամներ՝	կողմ-	դեմ-	ձեռնպահ-
1. Հարությունյան Վահրամ			
2. Շահինյան Շահեն			
3. Մնացականյան Գայանե			
4. Մարտիրոսյան Նարեկ			
5. Մակարյան Մարյամ			
6. Մելքոնյան Հակոբ			
7. Մկրտչյան Սարիբեկ			
8. Պողոսյան Արմինե			
9. Պետրոսյան Կարեն			
10. Մարկոսյան Սեյրան			

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022 թվականի հունիսի 13
Արաքս համայնք